

Ս. ՅՈՎՀ. ԵՊՍ. ՀԻՐԱԿՈՒՆՈՒ ՆՈՒԻՐԱՔԵՐՈՒԹԻՒՆԸ

Այլքսանդրոպոլից հաղորդում են մեզ, որ սրբ. Շիրա'ու-նի եպիսկոպոսը այս օրերս գնալով այնտեղ, իրան պատկանած կալուածքը մօտ տասն հազար ռուբլի արժողութեամբ, նօտա-րական կարգով փոխել է Մայր Աթոռի անուան իբրև մշտնջե-նական սեպհականութիւն:

Շատ ուրախալի է, որ սրբազանը իւր կենդանութեամբ տնօրինում է իւր գոյքի ապագան, որի համար և արժանի է ամեն մի բանիմաց հայի լիուլի գոհունակութեան:

ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻ ՆՈՐ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Եկող 1904 թուականին լրանում է հայ գրականութեան հայր և ծնող Ս. Մեսրոպ Մաշտոցի տառերի գիւտի 1500-ամեակը, որի առթիւ պ. Ս. Մալխասեանը միտք է յղացել տալ նոր հրատարակութեամբ հայ ամբողջ պատմագրութեան մի նոր գիտական հրատարակութիւն, որի առթիւ և դիմելով Վեհ. Հայրապետին խնդրել է նորա օրհնութիւնն ու գործի կազմա-կերպութիւնը: Հայրապետական կոնդակով պատուիրած է Ս. Էջմիածնի միաբանութեան անդամներից Տ. Գարեգին վարդապետ Եովսէփեանին և Գալուստ Տէր Մկրտչեանին, Ս. Մալխասեանի հետ ձեռք զարկել կարող անձնաւորութիւնների հետ և այդ կարևոր գործը առաջ տանել: Մինչև 1904 թ. յունիս ա-միսը պատրաստ պիտի լինի Պատմագիրների Ա. հատորը, իսկ հետեւեալ հատորները հետգհետէ պիտի հրատարակուեն:

Այդպիսի մի մեծ և ծանր գործի համար կարևոր էր և կարող անձնաւորութիւնների օժանդակութիւն, որոնք ըստ կարելոյն կարողանային ներածի չափ տալ բուն գիտական մի հրատարակութիւն, ուստի և Էջմիածնի միաբանութեան ան-դամների և ձեմարանի ուսուցչական խմբի կողմից պէտք է մասնակցեն Տ. Տ. Կարապետ, Գարեգին վարդապետները, Գա-լուստ Տէր-Մկրտչեան, Ա. Աբեղեան, Կանայեան, Մանանդեան և այլն:

Ոչ պակաս կարևոր խնդիր էր և բուն հրատարակութեան գործը՝ դրամականի կողմից: Առ այժմ այդ միտքն իրագործե-լու պատրաստակա ութիւն է յայտնել դարձեալ Էջմիածնի միա-բանութեան երիցագոյն անդամներից մէկը՝ Գեոր. սրբ. Սիւ-քիաս արքեպիսկոպոսը, որի ծախքով պիտի հրատարակուի Ա. հատորը: Ծախքը հաշուած է 5—6000 ռ., որից աւելի քան 3000 ռ. արդէն յանձնուած է պ. Մալխասեանին:

Միտքը, ըստ ինքեան, գովելի է և ցանկալի: Միայն մի բան մեզ զարմացնում է, թէ ինչո՞ւ հրատարակութեան գործը

չեն կամենում կապել Մ. Աթոռի հետ, որ ըստ ամենայնի իրաւունք ունի պահանջելու, որ այդ հրատարակութիւնը կատարուի իւր պատերի մէջ: Գրեթէ ստեղծող մեծ Մարդը էջմիածնի զաւակ, Պատմագիրներէ հրատարակութեան գործը յղացող Մ. Աթոռի ճամբարանի սան, գործը սրբագործուած և կազմակերպուած Ս. Էջմիածնի Գահակալի կոնդակով, հրատարակութիւնը սկսուած Մ. Աթոռի միաբաններէց մէկի ձեռքով, հրատարակութեան համար աշխատող ոյժերն՝ ամենքն ևս առանց բացառութեան Ս. Էջմիածնի շնորհը վայելած և նորան պարտական անձինք, մի խօսքով բոլոր էջմիածնինը և... և հրատարակութիւնը ոչ նորա անուան հետ կապուած:

Եթէ խնդիրն այն է, որ Մ. Աթոռի տպարանը անկարող է առ այժմ տալ այդպիսի գիտական հրատարակութիւններ՝ սխալ է, որովհետեւ վերջին տարիներս այն տեղից դուրս են եկել այնպիսի գիտական հրատարակութիւններ, որ ոչ մի այլ տպարանից յետ չեն մնում. օրին. Աճառեանի բառարանը, Ֆինկի վերջին աշխատութիւնը և այլն. եթէ կարող ձեռքերի պակասութիւն է՝ այդ ևս չեն կարող ասել, որովհետեւ բոլոր ոյժերն այն տեղից է վերցրած և Մայր Աթոռի ձեռագրատան բոլոր ձեռագիրները ղրուած են նոցա տրամադրութեան տակ, մի բան, որ ոչ մի տեղ չէին գտնի: Ուրեմն այլ ևս ինչ պատճառ: Լոկ միայն այն, որ յղացող անձը Տիգրան է գտնուում: Դա շատ քիչ է և անհիմն է Մ. Աթոռի անուան հետ չկապել այդ գործը:

Կարծում ենք, որ բոլոր գործօնները մեզ հետ կը ձայնակցեն, որ ինչպէս և լինի գործը պէտք է և անհրաժեշտ է կապել Ս. Էջմիածնի և ոչ մի այլ որևէ տեղի հետ:

ԿՈՑՍ Հ. ԹԱՅԻՐՆԱՆԻ ՆՈՒՅՐԸ

Առաջիկայ Միւռօնօրհնութեան առիթով բարեպաշտուհի կոյս Հռիփսիմէ Թայիրեանը իւր սեպհական ծախքով պատրաստել է տուել մի չքնադադործ և ոսկէնկար Հայրապետական մեծագիր քող, որ եկեղեցական նշանաւոր հանդէսների ժամանակ տանում են ամենայն Հայոց կաթողիկոսի առաջ:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԵՍՉԻ ԽՆԴԻՐ

ՄԿՐՏԻՉ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց ծալրագոյն Պատրիարք Համազգական նախամեծար Աթոռոյ Արտրատեան առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ էջմիածնի. Գերաշնորհ Տէր-Գէորգ